

Նվիրված է ԲԱ 75-ամյակին

Հարցազրույց «ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) գիտահետազոտական բաժինների վարիչների հետ հարցազրույցներ» շարքից:

2021թ մարտի 10

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ.

Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) «Աստղաքիմիա, աստղակենսաբանություն և արտարեգակնային մոլորակներ» գիտահետազոտական բաժնի վարիչ, ֆ.մ.գ.դ. Արարատ Եղիկյանի հետ



Արարատ Եղիկյան

Հարցելի պրն Եղիկյան,

1. Խնդրում եմ նկարագրել Ձեր դեկավարած գիտահետազոտական բաժինը՝ քանի՞ գիտաշխատողից է այն կազմված (մի փոքր ներկայացրեք նրանց), և որո՞նք են ուսումնասիրության հիմնական ուղղությունը, թեմաները, առաջադրված խնդիրները:

- 1) Անահիտ Սամսոնյան, կրտսեր գիտաշխատակից՝ զբաղվում է աստղաքիմիայով, աշխատում է թեքնածուական թեզի վրա:
- 2) Արմեն Հակոբյան, կրտսեր գիտաշխատակից՝ զբաղվում է դիտակների դիտողական հնարավորությունները ընդլայնելու հարցերով, օրինակ՝ ադապտիվ օպտիկայի կիրառելիության և այլն, այլ մոլորակների և աստղակերպերի մակերեսների բաղադրության հարցերով:
- 3) Մինչև 2020թ. վերջը նաև՝ Արթուր Ամիրխանյան (1947-2020, ֆ.մ.գ.թ.), փոքր դիտակների լաբորատորիայի վարիչ, բաժնի աշխատակից՝ զբաղվում էր հետաքրքիր օբյեկտների դիտողական հնարավորություններով, այդ թվում նաև

աստղաքիմիական տեսանկյունից: Ի հիշատակ Արթուր Ս. Ամիրխանյանի՝
<https://ui.adsabs.harvard.edu/abs/2020CoBAO..67..359Y/abstract>



Անահիտ Սամսոնյան, Արմեն Հակոբյան, Արթուր Ամիրխանյան

2. Ի՞նչ ծրագրերի շուրջ եք այժմ աշխատում: Ինչպիսի՞ միջազգային կամ տեղական համագործակցություններ ունեք:


- 1) Աստղաքիմիա,
- 2) Սառը դանդաղ աստղային արտահոսքերը և դրանց քիմիական բաղադրությունը,
- 3) Տաք արագ աստղային քամիների պայմաններում մասնիկների արագացման հարցերը,
- 4) AGB աստղային քամիների և մոլորակաձև միգամածությունների աստղաքիմիա,
- 5) Ակտիվ գալակտիկաների աստղաքիմիա,
- 6) Ճառագայթային քիմիայի հարցեր,
- 7) Նշված հարցերի դիտողական հնարավորությունները,
- 8) Պրոֆեսոր Հանս Ֆար (Hans Fahr), Բոննի համալսարան՝ մասնիկների արագացումը հարվածային ալիքների պայմաններում, արեգակնային քամի, Երկիր-Արեգակ կապերը,
- 9) Երևանի պետական համալսարան, ֆիզիկայի ֆակուլտետ՝ Ժակլին Մարտիրոսյան, ֆ.մ.գ.թ., պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինները ակտիվ գալակտիկաներում՝ մոդելավորում և դիտումներ:

3. Վերջին տարիների գիտական ի՞նչ հայտնագործություններ կառանձնացնեք:

- 1) Մոլորակաձև միգամածություններում ջրի սառույցի առկայության բացատրությունը, համընկնումը տեսական և դիտողական արժեքների համար:
- 2) Բուռն աստղառաջացումով ակտիվ գալակտիկաներում ջրի սառույցի դիտվող դրսևորման բացատրությունը, որը համընկավ տեսական արժեքի հետ:
- 3) Էներգետիկ մասնիկների հոսքի համար անալիտիկ բանաձևի առաջարկումը, որի կանխատեսումը մեծ ճշտությամբ համընկավ «Voyager 1» արեգակնային քամու հետ կապված դիտողական տվյալների հետ – Yeghikyan, A. 2017, Evolution of Energetic Particle Fluxes in the Early Heliosphere, *Astrophysics*, 60, 374-386:

4. Տպագրված կամ դեռ ընթացքի մեջ գտնվող ի՞նչ նշանակալից գիտական հոդվածներ կնշեք:

- 1) Yeghikyan, Ararat. 2017, On dust irradiation in planetary nebulae in the context of survivability of ices, *Molecular Astrophysics*, 8, p. 40-47.
- 2) Yeghikyan, A. 2017, Evolution of Energetic Particle Fluxes in the Early Heliosphere, *Astrophysics*, 60, 374-386.



5. ԳՀ բաժնի գործունեության այլ կարևոր ցուցանիշներ՝ գիտաժողովների մասնակցություն, զեկուցումներ, սեմինարներ, դրամաշտրհային նախագծեր, մրցանակներ:

- 1) Գազադինամիկական հոսքերը աստղաֆիզիկայում: Ակրեցիոն ներհոսքերը և արտահոսքերը – սեմինար, 2020, 4 մայիս:
- 2) «Աստղաքիմիա, աստղակենսաբանություն և արտարեգակնային մոլորակներ» բաժնի հաշվետու սեմինարը, 2020, 29 հունիս. կայքում կարելի է գտնել տեղեկություններ նշված ցուցանիշների վերաբերյալ:

6. Ձեր կարծիքով ինչու՞մ է կայանում աստղագիտության կարևորությունը մարդկության և Հայաստանի զարգացման գործում:

- 1) Աստղագիտության առաջնային խնդիրներն այսօր ֆիզիկայի խնդիրներն են, աստղագիտությունը դրանով վերադարձնում է իր պարտքը ֆիզիկային: Դրանք են՝ Տիեզերքի գոյության այն հարցը, որը թույլ է տալիս մարդու ի հայտ գալուն, թաքնված էներգիայի և զանգվածի խնդիրները, սև խոռոչների շրջակայքում երկրաչափության այնպիսի փոփոխությունները (սերտ կապված ժամանակի և տարածության հետ), որոնք թույլ են տալիս անցյալի և ապագայի հետ անմիջական հաղորդակցվելը: Կարևոր են նաև մերձավոր Տիեզերքի խնդիրները, մանավանդ, որ դրա նվաճման գործընթացը մեր աչքերի առաջ քայլ առ քայլ խորանում է: Այսօրվա քաղաքակրթության համար Երկիրն արդեն փոքր է, պետք է դուրս գալ Երկրի սահմաններից դեպի Լուսին, Մարս, այլ մոլորակներ և այլն:
- 2) Հայաստանի միակ մնացած զգալի ռեսուրսն է մարդկանց գիտական պոտենցիալը, որը, ցավոք, չի ընդունվում բոլոր իշխանությունների կողմից: Մյուս կողմից, իմ կարծիքով, Հայաստանի միակ ընդունելի զարգացման ձևը գիտության վրա հիմնված զարգացումն է:

7. Ի՞նչ է Ձեզ համար Բյուրականի աստղադիտարանը:

Հաճելի մի տեղ, որը հնարավորություն է տալիս զբաղվել գիտությամբ:



48 սմ AZT-14 աստղադիտակ

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը